

ՆԵՐԱԿԱ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԻՍՍԱՏՆԵՐԸ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱՍՈՒՅԹՆԵՐՈՒՄ

Տ. Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Վերջին տարիներին ներակայության հարցը դարձել է լեզվաբանության կարևոր հիմնահարցերից մեկը:

Հոդվածի նպատակը պայմանական ասույթների ներակա, մասնավորապես, գործաբանական տարբեր իմաստների վերհանումն ու վերլուծությունն է:

Ասույթի արտակա իմաստը, որն ակնհայտ է և բառացիորեն արտահայտված, կարող է հակադրվել, որոշ իմաստով, ասույթի ներակա իմաստին:

Կարևոր է նշել, որ տեքստի իմաստը համարժեք ընկալելու համար պետք է հաշվի առնել դրա և՛ ներակա, և՛ արտակա տարրերը՝ նախապատվություն չտալով դրանցից ոչ մեկին¹:

Ըստ Նյուելմանսի, լեզվի սովորական կիրառման բնորոշ հատկանիշներից մեկն այն է, որ շատ տարրեր մնում են ներակա: Հեղինակի կարծիքով, ընդհանուր առմամբ, խոսողն ի նկատի է ունենում այն, ինչ լսողն ընկալում է: Եվ այդ պատճառով էլ նա բաց է թողնում այնպիսի փաստեր, որ, իր կարծիքով, լսողը կարող է ինքը հասկանալ: Միևնույն ժամանակ լսողին հայտնի է, որ խոսողը դա անում է²:

Խայրուլլինի կարծիքով, իրական վիճակի նկարագրման ժամանակ ասույթում արտածվում են ոչ բոլոր նշանները: Որքան էլ ամբողջական արտահայտվի իրավիճակը լեզվում, նշանների մի մասը մնում է ասույթի սահմաններից դուրս, ինչը բացատրվում է ընդհանրացման ձգտումով: Այն նշանները, որոնք ներկայացված չեն իմաստային կառուցվածքում, բայց կարող են վերականգնվել, ելնելով ասույթի բովանդակությունից, հեղինակն անվանում է ներակա: Մրանից հետևում է, որ ցանկացած ասույթ պարունակում է ներակա իմաստ³:

Ինչպես նշում է Կամենսկայան, «ներակայությունը մարդկության տարաբնույթ գործունեությանը բնորոշ ամենատարածված միտումներից մեկի՝ օգտագործվող միջոցների և ժամանակի տնտեսման արտահայտությունն է: Խոսակցական գործունեությունում, մասնավորապես, նման տնտեսումը դրսևորվում է ավելի «սեղմ, խտացված» տեքստային կառույցների կիրառմամբ: Տեքստի խտացման համար ներակա կապերն ամենակատարյալ ձևերն են: Սակայն հեղինակի կողմից այս կապերի օգտագործումը և կիրառողի՝ դրա ընկալումը նրանցից պահանջում են համապատասխան գիտելիքներ: Օրինակ՝ գիտական տեքստերում այս կապերը վերականգնելու համար անհրաժեշտ են մասնագիտական գիտելիքներ համապատասխան բնագավառում»⁴:

Ըստ Կամենսկայայի՝ հնարավոր է տեքստի ներակայության 3 տեսակ՝

1) Քերականական ներակայություն, երբ մեկ կամ մի քանի նախադասություններում բացակայում են այս կամ այն անդամները:

2) Իմաստային ներակայություն, որը պայմանավորված է այն փաստով, որ տեքստում բացակայում են մեկ կամ մի քանի, որոշ դեպքում էլ՝ բավականին շատ նախադասություն-

¹ Տե՛ս Գ. Ա. Բրուտյան, Մեզարդարում, «Սովետական գրականություն», 1985, թիվ 2, էջ 20:

² Տե՛ս G. Nuchelmans, Taalifilosofie; Een Inleiding. Muidenberg: Coutinho, 1978, p. 55:

³ Տե՛ս В. И. Хайруллин, Имплицируемые признаки ситуации и перевод. - "Семантические и прагматические аспекты языковых единиц и речевых структур". Конференция молодых соотрудников и аспирантов. Тезисы докладов. Академия Наук СССР. Институт Языкознания. Совет Молодых Ученых и Специалисты. М., 1987:

⁴ Տե՛ս О. Л. Каменская, Текст и коммуникации. - "Высшая школа", М., 1990, էջ 74-75:

ներ (նախադասության մասեր), որոնք պարունակում են տվյալ տեքստին բնորոշ արտակա տեղեկատվություն:

3) Առաջին և երկրորդ դեպքերի համառեղ կիրառում:

Իսկ ո՞րն է ներակա կապերի ստեղծման և գոյության պատճառը: Բանն այն է, որ այս կապերը չափազանց արդյունավետ են տեքստի «խտացման» համար:

«Մարդկային մտածողության լեզվական հաղորդակցման առանձնահատկությունն այն է, - գրում է Կացնելսոնը,- որ ոչ բոլոր մտքերն են փոխակերպվում լեզվական տարրերի, այլ արտահայտման արտակա ձևերի հետ մեկտեղ գոյություն ունեն տեղեկատվության ներակա հաղորդման խորը, մինչ այժմ լեզվաբանների կողմից չպարզված ձևեր: Այն մնան է սառցաբեկորի այն մասին, որը թաքնված է ջրի տակ»⁵:

Ինչպես նշում է Խայրուլլինը, մի ասույթում ներակա նշանները կարող են մույն իրավիճակը նկարագրող մեկ այլ ասույթում արտահայտված լինել արտակա ձևով⁶: Այդ իմաստով մեծ հետաքրքրություն են ներկայացնում միև մույն ասույթի համադրական վերլուծությունները համապատասխան թարգմանության հետ: Մասնավորապես, ուշագրավ են այն ասույթները, որոնք թարգմանությամբ բառացի արտահայտում են սկզբնական ասույթի նշանակությանը հակառակ իմաստ: Այդպիսի թարգմանությունը կոչվում է *ex adverso* կամ «թարգմանություն հակառակից»:

Օր. He had only one arm. (Vonnegut) Նրա մի ձեռքը չկար: (Վոնեգուտ)

Ներակայության խնդիրը սերտորեն կապված է մեկ այլ կարևոր հիմնահարցի՝ գործաբանության հետ, որին վերջին ժամանակներս մեծ ուշադրություն է դարձվում: «Գործաբանություն» (պրագմատիկա) հասկացությունը, իր ներկա իմաստով, լայնորեն ուսումնասիրված է Չարլզ Մորիսի⁷ և Ռուդոլֆ Բարնափի⁸ կողմից: Այն կապված է իմաստաբանության և շարահյուսության հետ, սակայն մաև տարբերվում է դրանցից: Ըստ վերը նշված հեղինակների, շարահյուսությունը վերլուծում է նշանների միջև գոյություն ունեցող հարաբերությունը՝ իմաստաբանությունն ուսումնասիրում է հարաբերությունները նշանների և առարկաների միջև, իսկ գործաբանությունը՝ նշանների և դրանք կիրառողների միջև եղած հարաբերությունները⁹:

Ավելի ուշ Մոնթեյգի, Լյուիսի և Քրեստելի աշխատություններում գործաբանությունը դարձավ կայուն կառուցվածքով գիտություն: Փոխվեց մաև դրա ըմբռումը. «գործաբանությունն ուսումնասիրում է լեզվաբանական գործողությունները և համատեքստը, որում դրանք գործածվում են»¹⁰:

Այժմ անցնենք պայմանական ասույթների ներակա գործաբանական իմաստների վերլուծությանը:

Այդ նպատակով որպես նյութ վերցրել ենք անգլիացի մեծ գրող Ագաթա Քրիստիի «Make Mine Murder» վեպը: Որպեսզի պատկերը լինի ավելի ամբողջական և ճշգրիտ, ինչը կարևոր է մաև փձակագրական եզրակացությունների տեսանկյունից, քննել ենք վեպի բոլոր պայմանական ասույթները: Այս ըմտությունը պատահական չէ: Ինչպես հայտնի է, դետեկտիվ ժանրում լայնորեն կիրառվում է դեդուկտիվ մեթոդը, որը լեզվում արտահայտվում է պայմանական ասույթների տարբեր տեսակներով: Այդ ասույթներում մենք վերհանել և վերլուծել ենք գործաբանական մի շարք իմաստների համոզվածության, հնարավորության, թույլտվության, ցանկության, խորհրդի, ակոսսանքի, պառաջարկության, հանդիմանության, ընդհանրացման, պատրաստակամության, վստահության իմաստներ, որոնք մինչ այժմ նըշված չեն եղել լեզվաբանական գրականության մեջ, և այս իմաստով մեր աշխատանքը նորություն է պարունակում: Կան դեպքեր, երբ միև մույն ասույթում ներակայնորեն արտահայտված են մի քանի գործաբանական իմաստներ:

⁵ Տե՛ս С. Д. Кацинелсон, Типология языка и речевое мышление. Ленинград, 1972:

⁶ Տե՛ս В. И. Хайруллин, նշվ. աշխ., էջ 39:

⁷ Տե՛ս Charles Morris, Foundations of the Theory of Signs, 1938, p. p. 4-5:

⁸ Տե՛ս R. Carnap, Introduction to Semantics, Cambridge, Harvard University Press, 1962:

⁹ Leo Apostel, Introduction, Philosophica 27, Pragmatics & Philosophy 1, editors Leo Apostel & Asa Kasher, Belgium, 1981.

¹⁰ R. C. Stalnaker, Pragmatics - In: Semantics of Natural Language. D. Davidson & Harman (eds.) Dordrecht, Reidel, 1972, p. 383.

Այժմ քննարկենք յուրաքանչյուր դեպքն ավելի մանրամասնորեն՝ բերելով համապատասխան օրինակներ:

1) Հանդգվածության գործաբանական իմաստ:

«It is perfectly possible for Dr. Gerard to have committed the crime.

Being a doctor, he could easily counterfeit the appearance of malaria.

«But if so, why did Gerard call attention to the possibility of foul play? That my friends», said Poirot, «does not make common sense».

Նշված պայմանական ասություն խոսողի՝ պարոն Պուարոյի գործաբանական վերաբերմունքը այն է, որ նա լիովին հանդգված է՝ դոկտոր Ջերարդը մեղավոր չէ: Նա բերում է բազմաթիվ փաստարկներ, որ դոկտոր Ջերարդը, հնարավոր է, սպանած լիներ տիկին Բոյնթոնին (սա երևում է համատեքստից)¹¹: Մակայն հետո նա ինքն արտաբերում է մի նախադասություն, որը բոլորովին հակասում է վերը նշված փաստարկին. «That, my friends, doesn't make common sense» («Ռա, բարեկամներս, ոչ մի իմաստ չունի»): Այս նախադասությունից երևում է, որ պարոն Պուարոն հենց սկզբից հանդգված էր, որ դոկտոր Ջերարդը նրան չի սպանել: Պայմանականության ձևը, ինչպես նաև հակադրական իմաստով «but» շաղկապի կիրառությունը և գլխավոր նախադասության հարցական երանգը նույնպես ուժեղացնում են վերը նշված ներակա գործաբանական իմաստը:

2) Հնարավորության գործաբանական իմաստ

«I read some years ago that one of the Csar's

daughters was not killed in the Revolution in Russia but escaped secretly

to America. If so, this might be her daughter, mightn't it?».

Այս հատվածում բերված պայմանական ասություն խոսողը նկատի ունի, որ շատ հնարավոր է՝ Բոյնթոնի կրտսեր դուստրը Ռուսաստանում հեղափոխության ժամանակ սպանված ցարի երեխան լինի, քանի որ «she has a look, and she did hint at something Royal» («Նրա արտաքինում կա ինչ-որ արքայական կեցվածք»):

Might եղանակավորող բայի այդքան շատ գործածվելն ուժեղացնում է հնարավորության գործաբանական իմաստը:

3) Խորհրդի գործաբանական իմաստ

If I were you I'd give up all this silly play-acting. It's really much better to be friendly-and kind. You could be if you tried».

Առկա անիրական պայմանի նախադասությունում ներակայնորեն արտահայտված է խորհրդի գործաբանական իմաստը: Տիկին Բոյնթոնն արգելել է իր տղային և աղջկան ընկերություն անել Մառայի հետ: Մառայի կարծիքով դա «երեխայություն է և անմտություն»: Եվ Տիկին Բոյնթոնին խորհուրդ է տալիս «to give up all this silly play-acting» («Վերջ տալ այս անմիտ խաղին»), այսինքն՝ վարվել բոլորովին հակառակ կերպ. «It's really much better to be friendly and kind» («Իհարկե, ավելի լավ է լինել ընկերական և բարի») նախադասությունը much better (ավելի լավ) ածականի համեմատական աստիճանով և to be (լինել) վիճակ ցույց տվող բայով շեշտում է նշված իմաստը:

4) Ափսոսանքի գործաբանական իմաստ

«It's so lovely-the night and the blueness and the stars. If only we could be part of it all... If only we could be like other people instead of being as we are-all queer, warped and wrong».

Տվյալ հատվածում բերված պայմանական ասություն ըղձական եղանակի օգնությամբ ներակա կերպով արտահայտված է ափսոսանքի իմաստը: Կարդյն ափսոսում է իրենց ներկա վիճակի համար. «all queer, warped and wrong» («լիովին տարօրինակ, խեղաթյուրված և մոլորված»): Նա ցանկանում է դառնալ գիշերվա մի մասը: If only արտահայտությունն ավելի որամատիկ է դարձնում իրավիճակը, քան անիրական պայման արտահայտող I wish, I were կառուցվածքը, քանի որ խոսողը գիտակցում է, որ իրենց ցանկությունը հակասում է իրականությանը, ինչը բացահայտվում է նախադասության շարունակության մեջ. «instead of being as we are» («փոխանակ լինենք այնպես, ինչպես կանք»), ներառյալ ներկա ժամանակով դրված բայը:

¹¹ Պայմանական ասությունների ամբողջ վերլուծությունը տրվում է լայն համատեքստում, ինչը կերևա որանց հետազոտման մեջ, սակայն մեծ ծավալից խուսափելու համար ամբողջ համատեքստը չի բերվում, այլ սուկ պայմանական ասությւրը:

5) Հավանություն չտալու գործաբանական իմաստ

«I've felt that he didn't deserve to keep you if he didn't value your happiness a little more than he seemed to do».

Վերը նշված պայմանական ասույթում խոսողը՝ այսինքն Քոփը, ներակա կերպով արտահայտում է, որ ինքը հավանություն չի տալիս Լեմնոքսի վարքին: Նա սիրում է Նեդինին: Դա կարելի է եզրակացնել համատեքստի մանրագնին վերլուծությունից: Նա հուսահատ է, քանի որ համոզված է, որ Նեդինը դժբախտ է:

6) Կասկածանքի գործաբանական իմաստ

«And if you succeed, my friend», said Dr. Gerard, «you are indeed a marvel!»

Իրական պայմանի այս նախադասության մեջ ներակայված է ուժեղ կասկածի գործաբանական իմաստը, որը կարող ենք վեր հանել համատեքստի քննարկումից: Ըստ Պուարոյի՝ ինքը կարող էր իմանալ ամբողջ ճշմարտությունը մինչև մյուս առավոտ. «I know my own ability» («Ես գիտեմ իմ սեփական կարողությունը»), մինչդեռ գնդապետ Քարբրիի և ղեկտոր Ջերալդի կարծիքով պարոն Պուարոն չափազանց ինքնավստահ է: Գլխավոր նախադասությունը «You are indeed a marvel» («Դուք իսկապես հրաշք եք») ուժեղացնում է կասկածի իմաստը: Այս բառերում կա մակ որոշ հեզմանք:

7) Վստահության գործաբանական իմաստ

Poirot leaned forward confidentially

«Did you notice if I had just been sniffing those flowers?».

Ընդգծված պայմանական ասույթում կարող ենք վեր հանել վստահության իմաստը: Չմայած հարցերը շատ կասկածելի են, պարոն Պուարոն վստահ է, որ միս Փիրսը կպատասխանի դրանց այս կամ այն կերպ, քանի որ բոլորը գիտեն, թե ինչքան անուշադիր է նա: Դա երևում է վեպի բովանդակությունից: Առաջին նախադասությունում «վստահաբար» confidentially մակբայն ուժեղացնում է այս իմաստը:

8) Ընդհանրացման գործաբանական իմաստ

If you have a belief in yourself and in the rightness of what you are doing, you can often accomplish things that are well worth while!

Վերը նշված պայմանական ասույթում ներակայնորեն արտահայտված է ընդհանրացման իմաստը: Դա արտակայված է պայմանական ասույթին նախորդող համատեքստում կրկնակի օգտագործված some բառի միջոցով. «Some people have a genius for interference» («Ոմանք միջամտելու տաղանը ունեն») և «Some people do it clumsily» («Ոմանք դա անշնորհք ձևով են անում»): Բացի այդ, համատեքստում կան բազմաթիվ ձևեր, որոնք շեշտում են այս իմաստը: Դրանք են ներկա անկատար ժամանակը, «It is impossible to lay down any ruling on the subject» («Անհնար է օրենքների ենթարկել վեճի առարկան») անդեմ նախադասությունը, can եղանակավորող բայը, often մակբայը, «one» բառի եռակի կիրառումները («Should one, if one sees a wrong being done, attempt to put it right? One's interference may do good...») («Երբ տեսնում ես, որ սխալ է կատարվում, պե՞տք է փորձես դա ուղղել: Լավ կլինի միջամտել:») պայմանական նախադասության մեջ, «young people» («երիտասարդները») բառակապակցությունը:

9) Հանդիմանության գործաբանական իմաստը

«If you feel that, Miss King, you should not have adopted our profession. To us, death is and must always be-the Enemy».

Այս դեպքում խոսողը ներակա ձևով արտահայտում է հանդիմանության իմաստ: Պայմանական ասույթին հաջորդող ասույթը, որը տրված է բնորոշման տեսքով և ուժեղացված է «must always be» («միշտ պետք է լինի») արտահայտությամբ, հակասում է նախորդող ասույթին, որը միս Քինգի կարծիքն է («Death isn't really so important as we make out») («Իրականում մահը այնքան էլ կարևոր չէ, ինչպես դա մենք ընդունում ենք»), և սա է պատճառը, որ այստեղ կարելի է խոսել հանդիմանության գործաբանական իմաստի մասին:

10) Պատրաստակամության գործաբանական իմաստ

«All I want is her happiness. If she were happy with Lennox, I'd sit right back and fade out of the picture».

«But as it is, I'm standing by! If she wants me, I'm here!».

Բերված երկու պայմանական ասույթներում էլ դրսևորվել է պատրաստակամության ի-

մաստը: Բացատրությունից երևում է, որ պարոն Քոնլը սիրում է միսիս Բոյնթոնին, ինքը հարգում է նրան և ցանկանում, որ միսիս Բոյնթոնը երջանիկ լինի («I respect her») («Ես հարգում եմ նրան») և «all I want is her happiness») («Ես ուզում եմ, որ նա երջանիկ լինի»): Եթե նա երջանիկ լիներ Լենոքսի հետ, ինքը չէր խառնվի, սակայն քանի որ դա այդպես չէ, ինքը կլինի միսիս Բոյնթոնի կողքին («If she were happy with Lennox, he'd sit right back», բայց «as it is, I am standing by»): Եթե միսիս Բոյնթոնը իր կարիքն զգա, նա պատրաստ է օգնել նրան («I am right here at hand»):

1) Անվստահության գործաբանական իմաստով եռաբաղադրիչ պայմանական ասույթ

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում *if* շղկապով երկբաղադրիչ արտակա կառուցվածքները, որոնք իմաստաբանական տեսանկյունից հավասարազոր են եռաբաղադրիչ պայմանական ասույթներին:

Վեպում կա այդպիսի մի դեպք:

«If you follow me, I was surprised just because Raymond Boynton was so eminently fitted to be suspect».

Վերը նշվածը երկբաղադրիչ պայմանական ասույթ է, որտեղ զեղչված է մի մասը («I shall inform you», «I shall tell you»): Գլխավոր նախադասության իմաստը («I was surprised just because Raymond Boynton was so eminently fitted to be suspect») տրամաբանորեն չի հետևում երկրորդական նախադասության իմաստից («If you follow me»):

Այս նախադասության ճիշտ կառուցվածքը պետք է լիներ՝ «If you follow me, I shall tell you that I was surprised just because Raymond Boynton was so eminently fitted to be suspect»:

Ինչպես երևաց, վերը վերլուծված բոլոր պայմանական ասույթներում միայն մեկ գործաբանական իմաստ է ներակայված: Սակայն վեպում հանդիպեցինք այնպիսի ասույթների, որոնցում միաժամանակ ներակայված են մեկից ավելի գործաբանական իմաստներ: Բերենք օրինակներ.

1) Համոզվածության և ավստանքի գործաբանական իմաստ

What I mean is that **if I had gone away then and asked you to follow me you would have done so**. Yes, I really believe you would... I was not clever enough then to understand your mother and what she wanted».

Վերը նշված անիրական պայմանի ասույթում ներակայնորեն արտահայտված է համոզվածություն, որ բերված փաստարկները սխալ են: Նշված գործաբանական իմաստն արտահայտված է հաջորդ ասույթում. «Yes, I really believe you would» («Այո՛, ես իսկապես համոզված եմ, որ կգայիր»): Բացի այդ, ամբողջ համատեքստի վերլուծությունից կարելի է վեր հանել և ավստանքի գործաբանական իմաստը: «Wrong marriage» («սխալ ամուսնություն») արտահայտության գործածումը և հատկապես վերջին նախադասությունը շեշտում են վերը նշված իմաստը:

2) Համոզվածության և հնարավորության գործաբանական իմաստ

«Sooner or later Mrs. Boynton takes a dose and dies- and even **if the digitoxin is discovered in the bottle it may be set down as a mistake of the chemist who made it up**. Certainly nothing can be proved!»:

Ընդգծված պայմանական ասույթում ներակայված է համոզվածության, ինչպես նաև հնարավորության գործաբանական իմաստը: Համոզվածության իմաստն ուժեղացվում է պայմանական ասույթին նախորդող հետևյալ նախադասությամբ. «That is what anyone-anyone with a grain of sense would certainly do» («Սա, իհարկե, այն է, ինչ կաներ խելացի մեկը»), ինչպես նաև վերջին նախադասությամբ՝ «Certainly nothing can be proved» («Իհարկե, ոչինչ չի կարող ապացուցվել»):

Երկրորդական նախադասությունում *even* (նույնիսկ) բառի գործածումն ուժեղացնում է շատ քիչ հնարավորության այն միտքը, որ շշում կհայտնաբերեն թույն:

3) Համոզվածության և առաջարկության գործաբանական իմաստ

«If these fingerprints are sent to the prison where Mrs. Boynton was once a wardress, we shall soon know the truth when they are compared with the files».

Բերված պայմանական ասույթում ներակա ձևով միաժամանակ արտահայտված են և՛ համոզվածության, և՛ առաջարկության գործաբանական իմաստները: Պարոն Պուարոն

առաջարկում է բանտ ուղարկել մատնահետքերը, քանի որ դա կօգնի բացահայտելու ճշմարտությունը: Նա նաև համոզված է, որ պատասխանը դրական կլինի, որն արտահայտված է «soon know» («շուտով կհմանանք») արտահայտության օգնությամբ, ինչն ավելի է ուժեղացնում վերը նշված գործաբանական իմաստները:

4) Համոզվածության և նպատակի գործաբանական իմաստ

Anyway, very difficult to prove anything so long as the family sticks together and **if necessary lie like hell.**

Իրական պայմանի նշված ասույթում կարող են վեր հանվել համոզվածության և նպատակի գործաբանական իմաստները: Գնդապետ Քարբրդին համոզված է, որ տիկին Բոյնթոնի ընտանիքն է սպանել նրան, քանի որ նա շատ տհաճ կին էր («unpleasant old woman») («տհաճ ծեր կին»): Սակայն ոչ ոք չէր ցանկանում ասել ճշմարտությունը: Խորթ մոր մահը նրանց համար կորուստ չէր, և նրանք չէին ցանկանում, որ որևէ մեկը մեղադրվի: Եվ այս նպատակի համար ստում էին («lie like hell») («ստել ինչպես դժոխքը»):

5) Ցանկության և գնահատանքի գործաբանական իմաստ

We must wait for the right opportunity. And then - **if it goes all right - we shall be free - all of us.**

Վերը նշված պայմանական ասույթում խոսողի վերաբերմունքը գլխավոր նախադասությունում արտահայտված փաստերի գնահատումն է: Մա արտակայված է նախորդող երկխոսության մեջ. «Are you sure it's a good plan? Yes, I think so!» («Դուք վստահ եք, որ դա լավ ծրագիր է: Այո՛, ես այդպես կարծում եմ»): Տվյալ պայմանական ասույթում կարելի է վեր հանել նաև ուժեղ ցանկության իմաստ: Ռեյն ամբողջ սրտով ցանկանում է, որ ծրագիրն իրականանա: Նա ցանկանում է, որ ամեն ինչ լավ ընթանա, և բոլորն ազատվեն («We shall be free - all of us») («Մենք կազատվենք, մենք բոլորս»):

Ահա այսպիսին են պայմանական ասույթներում մեր կողմից վեր հանված գործաբանական իմաստները:

Այսպիսով, վերլուծությունից երևում է, որ թույլտվության և ընդհանրացման գործաբանական իմաստներն առկա են միայն իրական պայմանների ասույթներում, իսկ հնարավորության և ցանկության իմաստները՝ թե՛ իրական, թե՛ հնարավոր ասույթներում: Անիրական պայմանի ասույթներում ներակա ձևով արտահայտված են ավստսանքի, հանդիմանության, վստահության իմաստները: Խորհրդի գործաբանական իմաստը վեր է հանվել անիրական և իրական, իսկ կասկածանքի իմաստը՝ անիրական և հնարավոր պայմանի ասույթներում:

Եվ միայն համոզվածության իմաստն է, որ արտահայտվել է երեք տիպի պայմանական ասույթներում՝ իրական, հնարավոր և անիրական:

Т. Г. МАНУКЯН - Имплицитные прагматические значения в условных высказываниях.

Цель статьи-выявить и показать многочисленные имплицитные прагматические значения в условных высказываниях, которые были найдены при детальном контекстуальном анализе романа Агаты Кристи "Make Mine Murder", ранее не упоминавшиеся в работах других лингвистов. В качестве материала для исследования послужил вышеупомянутый роман, так как в детективном жанре широко применяется дедуктивный метод, который в обыденном языке выражается посредством различных видов условных высказываний.